ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2022 թվականի N 305-Ա

ՌԻՄԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ԿԱՊԱՆԻ N 13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՌՈԶԱ ԹԵՎԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Ռ. Մկրտչյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ամենամյա արձակուրդում գտնվելու ընթացքում, նրա պարտականությունները կատարող Ռիմա Մկրտչյանին, առողջական խնդիրներով պայմանավորված, 2022 թվականի օգոստոսի 10-ից ազատել տնօրենի պարտականությունների կատարումից:

2. 2022 թվականի օգոստոսի 10-ից 19-ը ներառյալ «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Ռոզա Թևանյանին:

08.08.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. Ղուկասյան**

2022թ.օգոստոսի 8